ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ընտրական համակարգերի միջազգային հաստատության

և

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

Երևանի պետական համալսարանի

Շիրակի պետական համալսարանի

Վանաձորի պետական համալսարանի

միջև

Երևան

Հունվար, 2020 թ.

Ընտրական համակարգերի միջազգային հաստատության հայաստանյան գրասենյակը («ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղ») և հետևյալ համալսարանները՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Շիրակի պետական համալսարանը և Վանաձորի պետական համալսարանը (այսուհետ «Համալսարաններ») (այսուհետ յուրաքանչյուրը առանձին՝ «Մասնակից» և բոլորը միասին՝ «Մասնակիցներ»), հանձնառություն են ստանձնում քաղաքացիական պատասխանատվությունը և մասնակցությունը խթանող կրթական առաջարկներ ներկայացնել համալսարանական ուսանողներին և դասախոսներին:

Ուստի մասնակիցները ստորագրում են սույն Փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) ստորև նկարագրված համատեղ գործունեությամբ իրենց համապատասխան Համալսարաններում քաղաքացիական պատասխանատվությունը և մասնակցությունը ծրագրի մշակմանն ուղղված իրենց մտադրությունները ամրագրելու համար:

1. ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

ա. Համաձայն սույն Փոխըմբռնման հուշագրի, ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղը և Համալսարանները մտադիր են համագործակցել, որպեսզի մշակեն, իրականացնեն, մշտադիտարկեն և գնահատեն քաղաքացիական կրթության մի ծրագիր, որի նպատակն է դասավանդման նորարարական մոտեցման միջոցով ուսանողներին ներկայացնել ժողովրդավարական քաղաքացիության, լավ կառավարման, քաղաքացիական հասարակության, քաղաքացիական մասնակցության և մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները:

բ. Այս համագործակցության նպատակն է աջակցել Հայաստանում կրթության զարգացմանը «Ներգրավված քաղաքացի» քաղաքացիական կրթության դասընթացի միջոցով և այն գործողությունների միջոցով, որոնք ուղղված են ուսուցիչների և ուսանողների շրջանում Հայաստանում հասարակական կյանքի մասնակցության և քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ իրազեկմանը և ուսուցման որակի բարելավմանը:

գ. Դասընթացը, որը ուսանողների համար հասանելի կլինի որպես ընտրովի կրեդիտային դասընթաց, բաղկացած կլինի Հայաստանի համատեքստին հարմարեցված քաղաքացիական

կրթության թեմաներից: Կկիրառվեն լսարանային ինտերակտիվ ուսուցման մեթոդներ՝ որպես ընտրողների կրթության և քաղաքացիական իրազեկման ժամանակակից և ոչ ավանդական մոտեցումներ: Մասնակից ուսանողները նաև կներգաղվվեն արտաուսումնական գործունեության մեջ՝ սոցիալական հիմնահարցերի վերաբերյալ իրազեկման բարձրացման համար, ինչպես նաև՝ հանրային ծառայության գործունեության մեջ, որն իրենց համայնքներում ունի չափելի ազդեցություն:

2. ԱՑ ԷՖ Ի ԷՍ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Օգնել գործընկեր Համալսարաններին ներդնել «Ներգրավված քաղաքացի» դասընթացը կանոնավոր ընդհանուր ուսումնական ծրագրում,

բ. Գործընկեր Համալսարաններին տրամադրել քաղաքացիական կրթությանն առնչվող նյութեր անգլերեն և հայերեն լեզուներով, այդ թվում դասախոսների ձեռնարկներ, ուսանողների դասագրքեր և լրացուցիչ ուսումնական նյութեր, որոնք կգործածվեն դասընթացի ընթացքում,

գ. Գործընկեր Համալսարանների դասախոսներին/դասավանդողներին տրամադրել վերապատրաստման դասընթացներ, դասընթացի անհրաժեշտ ուսումնական և մեթոդաբանական նյութեր, ինչպես նաև՝ այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի առարկան վերապատրաստման սեմինարների, գիտաժողովների և այլ հանդիպումների միջոցով հաջողությամբ դասավանդելու համար,

դ. Մշտադիտարկել և գնահատել դասընթացի իրականացումը և արդյունավետությունը, ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից մշակված մեթոդաբանության համաձայն,

ե. Գործընկեր Համալսարաններին աջակցել քաղաքացիական կրթության դասընթացը խթանելու գործում,

զ. Գործընկեր Համալսարաններին տեղեկացնել քաղաքացիական կրթության ոլորտում ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրերի մասին,

է. Անհրաժեշտության դեպքում գործընկեր Համալսարաններին տրամադրել միջազգային քաղաքացիական կրթության փորձի մասին տեղեկատվություն:

3. ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Դասընթացը անցկացնել ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից մշակված մեթոդաբանության համաձայն,

բ. Համալսարաններում կամավոր կերպով առաջարկել կրեդիտային դասընթաց և ակտիվորեն խթանել այն բոլոր ֆակուլտետների ուսանողների շրջանում,

գ. Օգնել ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղին անհրաժեշտ հարաբերություններ և կապեր հաստատել համապատասխան անձնակազմի, դասախոսների և ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների հետ,

դ. Նշանակել դասախոսներ/դասավանդողներ, որոնք կանցկացնեն և կիրականացնեն դասընթացը գործընկեր Համալսարաններում և երաշխավորել, որ նշանակված դասախոսները/դասավանդողները դասընթացի արդյունավետ իրականացման համար մասնակցեն վերապատրաստման դասընթացներին/աշխատաժողովներին և ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից կազմակերպված այլ միջոցառումներին,

ե. ԱՑ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղին տեղեկացնել դասընթացի իրականացման պլանների մասին,

գ. Դասընթացը գնահատել ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից առաջարկված մեթոդաբանության համաձայն,

է. Ուսանողների գիտելիքների և շարժառիթների վրա ունեցած իրական ազդեցությունը գնահատելու համար աշխատել ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի հետ՝ օգտագործելով քանակական և որակական միջոցներ:

4. ՍՏԱՆԴԱՐՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ա. Մասնակիցները պահպանելու են իրենց սեփական առանձին և յուրահատուկ առաքելությունները և լիազորությունները, ինչպես նաև՝ իրենց սեփական պատասխանատվությունները: Սույն Փոխըմբռնման հուշագրով ամրագրված Մասնակիցների միջև համագործակցությունը չպետք է դիտարկվի կամ մեկնաբանվի որպես գործընկերություն կամ իրավաբանական ու ֆիզիկական անձի որևէ այլ տեսակ: Սույն Փոխըմբռնման հուշագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես գերակայող կամ Մասնակիցների միջև կնքված համաձայնագրերին կամ պայմանագրերին որևէ կերպ միջամտող, ինչպես սույն Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից առաջ, այնպես էլ՝ հետո,

ա. Յուրաքանչյուր Մասնակից պետք է լիարժեք կերպով պատասխանատվություն կրի այն ծախսերի համար, որը նա կատարում է սույն Փոխըմբռնման հուշագրում նկարագրված ծրագրերի շրջանակներում իրականացրած գործողությունների առնչությամբ, և բոլոր այսպիսի ծախսերի և գործողությունների համար յուրաքանչյուր Մասնակցի պետք է ապահովել միջոցների առկայությամբ: Մասնակիցները ընդունում են, որ սույն Փոխըմբռնման հուշագիրը չի ստեղծում որևէ ծախս կամ ֆինանսական պարտավորություն կամ չի ազդում դրանց վրա, ինչպես նաև՝ չի ստեղծում օրենքով նախատեսված պարտավորություն որևէ Մասնակցի համար կամ որևէ իրավունքներ որևէ երրորդ կողմի համար,

ա. Անհրաժեշտության դեպքում լրացումներ և/կամ փոփոխություններ կարող են արվել կամ կցվել սույն Փոխըմբռնման հուշագրին Մասնակիցների գրավոր փոխադարձ համաձայնությամբ,

բ. Սույն Փոխըմբռնման հուշագրի համաձայն, Մասնակիցները համաձայնվում են, որ ոչ մի կողմ, առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ չափով, չպետք է հրապարակեն, տարածեն, հայտնեն կամ որևէ կերպ բացահայտեն որևէ կողմից տրամադրված որևէ գաղտնի կամ մասնավոր տեղեկատվություն,

գ. Մասնակիցները կարող են ցանկացած պահի դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագրով ամրագրված համագործակցությունը, այդ դադարեցման մասին երեք (3) ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Մասնակցին,

դ. Սույն Փոխըմբռնման հուշագիրը միջազգային համաձայնագիր չէ և չի ստեղծում միջազգային օրենքով նախատեսված որևէ իրավունքներ կամ պարտավորություններ,

ե. Մասնակիցները գիտակցում են, որ ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից սույն Փոխըմբռնման հուշագրով իրականացվող ապրանքների ու ծառայությունների տեսքով աջակցությունը, տեխնիկական աջակցությունը և վերապատրաստման դասընթացները դիտարկվում են որպես դոնորների և Հայաստանի միջև գործող երկկողմանի համաձայնագրերի շրջանակներում իրականացվող աջակցություն, և ենթակա են նշված համաձայնագրերի դրույթներին և պայմաններին, այդ թվում՝ հարկերից և մաքսատուրքերից ազատման վերաբերյալ դրույթներին:

զ. Հուշագրի ժամկետը և ուժի մեջ մտնելու ամսաթիվը. սույն Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի հունիսի 30-ը:

է. Սույն Փոխըմբռնման հուշագրում նկարագրված ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի գործունեությունը կախված է դոնոր կազմակերպություններից, ինչպիսին է՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, տրամադրվող շարունակական ֆինանսական աջակցությունից:

Այդ աջակցության վերաբերյալ որոշումները բացառապես պատկանում են դոնորներին, որոնք սույն Փոխըմբռնման հուշագրով սահմանված ոչ մի իրավական պարտավորություն չունեն:

զ. Կազմված է XXX երկլեզու (անգլերեն և հայերեն) բնօրինակներով: Փոխըմբռնման հուշագիրը ստորագրող յուրաքանչյուր Մասնակից կստանա մեկական բնօրինակ: Փոխըմբռնման հուշագրի հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարաձայնության դեպքում Մասնակիցները պետք է վկայակոչեն անգլերեն տարբերակը:

ԱՅ ԷՖ Ի ԷՍ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ժերոմ Լեյրո, Տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գեղամ Գևորգյան, Ռեկտորի պաշտոնակատար

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Երվանդ Սերոբյան, Ռեկտորի պաշտոնակատար

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սուսաննա Թումանյան, Ռեկտորի պաշտոնակատար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դիանա Գալոյան, Ռեկտորի պաշտոնակատար

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կարինե Հարությունյան, Ռեկտոր